

ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՅԱՆՑԱՊԱՐՏՆԵՐՈՒՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԻ ԵՐԷԿ

«Փրաւտա»-ի վերջին համարին մէջ լոյս տեսած տեղեկութեան մը համաձայն, երէկ սկսած է Ատրպէյճանի Սուճկայիթ քաղաքի մէջ Փետրուարի վերջերուն պատահած հակա-հայ ջարդերուն յանցապարտներուն դատաւարութիւնը: Ջարդերուն որպէս մասնակից ձերբակալուած էին 80 հոգի:

Սուճկայիթի խռովութիւններուն եւ ջարդերուն զոհ դարձած էին 26 հայեր եւ 6 ատրպէյճանացիներ, ինչպէս նաեւ կային մօտ 200 վիրաւորներ: Խռովութիւնները սկսած էին 26, 27, 28 Փետրուարին, երբ Ղարաբաղի Մարզի հայերը, որոնք 75 առհարիրը կը կազմեն բնակչութեան, պահանջեցին մայր հայրենիքին միանալ եւ տեղւոյն խորհրդարանը, ստուար մեծամասնութեամբ բանաձեւ մը քուէարկեց եւ դայն ներկայացուց կեդրոնական իշխանութեան նոյն պահանջը ներկայացնելով: Ղարաբաղի հայերը ցոյցեր կատարեցին մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ եւ զօրավիգ կանդնեցան խորհրդարանի բանաձեւին:

Ստեփանակերտի ցոյցերուն ընթացքին պատահած միջհամայնքային բախումներուն զոհ դացին 2 հոգի եւ վիրաւորուեցան 50 ուրիշներ:

«Փրաւտա»-ի Սուճկայիթի թղթակիցը կը գրէ նոյն տեղեկատուութեան մէջ թէ հազարաւոր հայ ընտանիքներ, որոնք արիւնալի դէպքերու ազդեցութեան տակ հեռացած էին քաղաքէն, տակաւին չեն վերադարձած իրենց տուները եւ կ'աւելցնէ թէ 1200 պաշտօններ թափուր մնացած են հայերու հեռացումով:

Կը յիշեցնենք մեր ընթերցողներուն թէ Սուճկայիթի յանցապարտներուն դատաւարութիւնը պիտի ըլլայ բաց: